ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 նոյեմբերի 2026թ. թիվ 795-Ա

Լ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՍՏՐԱՍԲՈՒՐԳ
ՄԵԿՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1230-Ն որոշմամբ սահմանված կարգի 9-րդ և 12-րդ կետերով, հիմք ընդունելով Ստրասբուրգ և Վանաձոր քաղաքների միջև իրականացվող (MELINEE) ապակենտրոնացված ծրագրի տնօրեն Ռենո Ժակենի հրավերը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2026 թվականի նոյեմբերի 20-ի թիվ ԴԽ/17.3/43578-2026 գրությունը և հաշվի առնելով Լ.Աբրահամյանի 2026 թվականի նոյեմբերի 20-ի զեկուցագիրը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի խորհրդական Լիլիա Աբրահամյանին 2026թ. նոյեմբերի 23-26-ը ներառյալ թույլատրել մասնակցելու Ֆրանսիայի Հանրապետության Ստրասբուրգ քաղաքում՝ «Մոբիլիզացնելով զորեղացած առաջնորդներին. ներառականություն, ցանցային փոխգործակցություն, ներգրավվածություն և հավասարություն» (MELINEE) ծրագրի ամփոփիչ միջոցառմանը:

2. Լ.Աբրահամյանի՝ գործուղման հետ կապված ծախսերի հատուցումը կատարվելու է հրավիրող կողմի միջոցների հաշվին:

3. Լ.Աբրահամյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում այցի արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնել Լոռու մարզպետին և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-11-23 14:10:26 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. նոյեմբերի 23
ք.Վանաձոր